



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 օգոստոսի 2019 թվականի թիվ 97-Ս

ք. Երևան

«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈՒՆԻՆԳ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2019 թվականի հուլիսի 03-ին հարուցված թիվ 16 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով 2019 թվականի հուլիսի 03-ին «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈՒՆԻՆԳ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Ընկերության 2019 թվականի հունիսի 29-ի, 30-ի և հուլիսի 01-ի եթերում հեռարձակված մանկական հաղորդումները հեռարձակվել են առանց ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով:

Ընկերության 2019 թվականի հունիսի 29-ի, 30-ի և հուլիսի 01-ի եթերը մշտադիտարկում իրականացնելիս արձանագրվել է, որ Ընկերությունը մասնավորապես, «Մարդուկներ» մանկական հաղորդումը հեռարձակել է՝ հունիսի 29-ին՝ ժամը 10:58:12-ին և 16:37:08-ին, հունիսի 30-ին՝ ժամը 08:18:10-ին, 10:51:44-ին և 16:04:33-ին և հուլիսի 01-ին՝ ժամը 08:10:14-ին և 15:07:22-ին: Նշված մանկական հաղորդումները հեռարձակվել են առանց ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրի:

Հանձնաժողովը դիմել է Ընկերությանը՝ վարչական վարույթի շրջանակներում իր պարզաբանումները և բացատրությունները ներկայացնելու առաջարկով:

Ընկերությունը 2019 թվականի օգոստոսի 21-ին գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել իրավախախտման վերաբերյալ իրենց պարզաբանումը, հայտնելով այն մասին, որ արձանագրությամբ նշված եթերաժամերին հեռարձակված մանկական հաղորդումները եղել են կրկնություն, այդ իսկ պատճառով հեռարձակվել են առանց ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրի:

Ընկերության կողմից ներկայացված պարզաբանման ուսումնասիրության և համադրման արդյունքում հայտնի է դարձել, որ Ընկերությունը արձանագրությամբ նշված եթերաժամերին հեռարձակված մանկական հաղորդումները եղել են կրկնություն:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածը սահմանում է. Հանրային հեռուստաընկերությունը և Հայաստանի Հանրապետությունում գործող այն մասնավոր հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են նաև մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել խուլ հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը,

օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝
բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

ա) անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Օրենքի պահանջի խախտումը վերացնելու հիմքով Ընկերության նկատմամբ հարուցված թիվ 16 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով և հիմք ընդունելով «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության 21.08.2019թ-ի գրությունը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 16 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

23 օգոստոսի 2019թ.

ք. Երևան